

ՄԵՊՏԵՄԲԵՐ 2022

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





| | |
|--|----|
| 1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ | 4 |
| 1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում | 5 |
| 1.1.1. Ջրահեռացման համակարգի կառավարում | 7 |
| 1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում | 8 |
| 1.3. Ջրահեռացման համակարգ | 9 |
| 1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում | 10 |
| 1.5. Էներգահամակարգ | 10 |
| 1.6. Մեքենա-մեխանիզմներ | 11 |
| 2. Առևտրային տնօրինություն | 12 |
| 2.1. Բաժանորդների տվյալներ | 13 |
| 2.2. Հասույթ | 13 |
| 2.3. Գանձում | 14 |
| 2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/ | 15 |
| 2.5. Ջրաչափեր | 16 |
| 2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում | 17 |
| 3. Տեխնիկական տնօրինություն | 18 |
| 3.1. Ջրամատակարարման շարունակականություն | 19 |
| 3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում | 20 |
| 3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ | 22 |
| 3.4. Ջրատար համակարգի բարելավում | 23 |
| 3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն | 26 |
| 3.6. 1-85 թեժ գիծ | 27 |
| 4. Լրատվական ծառայություն | 28 |
| 5. Որակի, առողջության և անվտանգության բաժին | 31 |
| 5.1. Դասընթացներ/սեմինարներ | 32 |
| 5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում | 33 |
| 5.3. Քլորի տարողությունների ճնշափորձարկում, վկայագրման և ներկման աշխատանքներ | 34 |
| 5.4. Բժշկական գնություններ և հետազոտություններ | 34 |
| 5.5. Արտադրական վտանգավոր օբյեկտների և վկայագրերի փորձաքննության աշխատանքներ | 34 |
| 6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ | 35 |
| 6.1. Համակարգչային ցանց | 36 |
| 6.2. Ինտերակտիվ համակարգ | 36 |

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի ու կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝

● «Մևան» տեղամասի աշխատակիցների կողմից ք.Մևան, Նաիրյան 175 (d=32մմ L=24 գծմ պեթ խողովակի մոնտաժում) և Նաիրյան 3 (d=50մմ L=28գծմ պեթ խողովակի մոնտաժում) հասցեներում իրականացվել են ջրագծերի վերակառուցման աշխատանքներ:



Վայոց ձորի մարզ



● «Եղեգնաձոր» տեղամասի կողմից ք.Եղեգնաձոր, Արսենյան 31 բ/բ շենքի d=50մմ L=85գծմ մետաղական խողովակաշարքը քայքայված լինելու պատճառով ապամոնտաժվել և վերակառուցվել է d=63մմ L=85գծմ պեթ խողովակ: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, տնտեսվել է մոտ 1լ/վրկ ջրաքանակ:



● «Վայք» տեղամասի կողմից Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնք, Շատին բնակավայրի Վանքի Ձոր կոչվող թաղամասում կառուցվել են d=63մմ L=250գծմ, d=40 մմ L=170գծմ և d=32մմ L=90գծմ պեթ խողովակներով ջրագծեր, իրականացվել են անհատական միացումներ d=20մմ L=290գծմ ընդհանուր երկարությամբ, սահմանագատման կետում տեղադրվել է թվով 16 ջրաչափական դիտահոր և թվով 16 d=15մմ փական:

Սյունիքի մարզ



● «Կապան» տեղամասի կողմից ք.Կապան, Երկաթուղայինների փողոցի 13-րդ և 15-րդ շենքերի հարևանությամբ իրականացվել են նոր ջրագծի վերակառուցման աշխատանքներ՝ պեթ խողովակներով (d=50մմ, L=65գծմ և d=63մմ, L=70գծմ), տեղադրվել են թվով 3 d=50մմ փականներ:

Արմավիրի մարզ

● «Էջմիածին» տեղամասի կողմից Այգեկ համայնքի Երևանյան խճուղու պողպատե խողովակաշարք փոխարինվել է L=1150գծմ պեթ խողովակաշարքով, մոտ 60 բաժանորդի ջրաչափական սարքեր տեղափոխվել են սահմանագատման կետ: Կատարված աշխատանքների արդյունքում համայնք մտնող ջրի հոսքն ավելացել է 1-1,5լ/վրկ չափով, որի հետևանքով բարելավվել է մատակարարվող խմելու ջրի որակը, կարգավորվել է բաժանորդների անխափան ջրամատակարարումը, վերացվել են ջրակորուստները: Շահագործումից հանվել է կոռոզիայի ենթարկված և քայքայված L=1150գծմ խողովակաշարք:



Ջրատարներ

● «Արգնի 2 - Երևան» $D=1000$ մմ ջրատարի մոտ $L=170$ գծ/մ հատվածը, որը ձգվում է Հրազդան գետի աջ ափով, սողանքների պատճառով հաճախակի վթարվում էր և հանգեցնում երկարաժամկետ ջրանջատումների: Խնդրի կարգավորման համար «Արաբկիր» տեղամասի աշխատակիցները, ՋՄԳՍ ծառայության աշխատակիցների հետ համատեղ, իրականացրել են նշված հատվածի շրջանցման աշխատանքներ և կառուցվել է $D=1000$ մմ $L=210$ գծ/մ երկարությամբ շրջանցող ջրատար: Իրականացված աշխատանքների արդյունքում բարձրացել է ջրատարի աշխատանքի հուսալիությունը, բացառվել են տեխնաձին պատճառների հետևանքով շարունակականության անկումները և վթարների առաջացումը:

Արաբկիր վարչական շրջան

● Բաղրամյան պողոտա 40 հասցեում գտնվող պողպատե $d=150$ մմ ջրագծի $L=50$ գծ/մ երկարությամբ հատվածը գտնվում էր քայքայված վիճակում և պարբերաբար կրկնվող վթարների վերացումն անարդյունք էր:



Խնդրի կարգավորման համար «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների կողմից ներթափանցման միջոցով կառուցվել է $d=75$ մմ $L=50$ գծ/մ պոլիէթիլենային խողովակ, տեղադրվել է $d=65$ մմ փական:



● «Արաբկիր» ՇՏ «Զեյթուն» հենակետի աշխատակիցների կողմից Դրոյի փողոց 16 հասցեում կառուցվել է $d=63$ մմ $L=100$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային ջրագիծ, տեղադրվել է $d=50$ մմ փական:

1.1.1. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

● «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից Նոր Նորք 1-ին գ-ծ 69 հասցեում կառուցվել է $d=200$ մմ $L=60$ մ երկարությամբ պոլիէթիլենային երկշերտ ծալքավոր խողովակներով կոյուղագիծ:

● Երևան ՇՏ սպասարկման տարածքում իրականացվել են կոյուղագծերի պրոֆիլակտիկ լվացումներ՝ կոյուղատարերի անխափան աշխատանքը ապահովելու նպատակով:



Գեղարքունիքի մարզ

● «Սևան» տեղամասի կողմից ք.Սևան, Նաիրյան 3, Մարգի Սևանեցի 24 (տեղադրվել է դիտահորի ծածկ), Նաիրյան 183 և Շահումյան 33 հասցեներում իրականացվել են դիտահորերի վերանորոգման ուղղված շին. աշխատանքներ, ինչպես նաև իրականացվել է կոյուղագծի վերակառուցման աշխատանք ք.Սևան, Նաիրյան 3 ($d=150$ մմ $L=15$ գմ պեթ ծալքավոր խողովակի մոնտաժում) հասցեում:



Վայոց ձորի մարզ



● «Եղեգնաձոր» տեղամասի կողմից ք.Եղեգնաձոր, Մոսկվի 6 բ/բ շենքի բակային հատվածում կառուցվել է $d=200$ մմ $L=52$ գմ կոյուղագիծ՝ սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ասֆալտապատման աշխատանքներին զուգահեռ, ինչպես նաև տեղադրվել է թվով 1 ե/բ դիտահոր և ե/բ դիտահորի ծածկ՝ թուջե մտոցով:

Արարատի մարզ

● «Արտաշատ» տեղամասի կողմից իրականացվել է Ոսկետափ բնակավայրի Շիրազի, Ալեք Մանուկյան, Մովսես Խորենացի, Երևանյան, Գ.Նժդեհ, Չարենցի, Երկաթուղային փողոցների վթարային ջրագծերի վերակառուցում պեթ $d=20-160$ մմ խողովակներով ($d=160$ մմ $L=990$ գմ, $d=110$ մմ $L=960$ գմ, $d=90$ մմ $L=743$ գմ, $d=75$ մմ $L=200$ գմ, $d=63$ մմ $L=310$ գմ, $d=50$ մմ $L=340$ գմ, $d=40$ մմ $L=105$ գմ, $d=20$ մմ $L=380$ գմ): Ընդհանուր առմամբ կառուցվել են $d=20-160$ մմ $L=4028$ գմ ջրագծեր, տեղադրվել է թվով 45 ջրաչափական դիտահոր, ապամոնտաժվել են հին ջրաչափերը, նոր տեղադրված ջրաչափական դիտահորերում տեղադրվել է թվով 52 $d=15$ մմ ջրաչափ, տեղադրվել է թվով 45 $d=15$ մմ բրոնզե փական, Երևանյան խճուղու հատման հատվածներում ջրագծերի անցկացման համար տեղադրվել են մետաղական խողովակներից պատյաններ, շահագործումից հանվել են $d=25-150$ մմ մետաղական և թուջե $L=4028$ գմ վթարային վիճակում գտնվող ջրագծեր:



Մեպտեմբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

| Կատարված աշխատանքները | Չափման միավոր | Քանակ |
|--|---------------|-------|
| Չափում հոսքաչափով | տեղ | 2646 |
| Որոնում խողովակափնտրիչ սարքով | մ | 73625 |
| Հոսակորուստի որոնում ակվաֆոնով | մ | 59356 |
| Հոսակորուստի որոնում կորեյատորով | մ | 23698 |
| Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում | հատ | 5 |
| Շահագործումից հանված ջրագիծ | մ | 492 |
| Կառուցված ջրագիծ | մ | 6556 |
| Կառուցված կոյուղագիծ | մ | 924.5 |
| Վերացված գաղտնի վթարներ | հատ | 13 |
| Փոխարինված փական | հատ | 45 |
| Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց | հատ | 330 |
| Մաքրված դիտահոր | հատ | 762 |
| Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ | լ/վ | 13.6 |
| <i>Վերացված վթարներ</i> | | |
| Ջրամատակարարման ցանցում | հատ | 1127 |
| Ջրահեռացման ցանցում | հատ | 1543 |
| Պոմպակայաններում | հատ | 0 |
| Մաքրված անձրևընդունիչ | հատ | 0 |

Մեպտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

| | Պոլիէթիլենային խողովակներ (հատ) | Մետաղական խողովակներ (հատ) | Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ |
|----------|---------------------------------|----------------------------|---|
| Ընդամենը | 1024 | 986 | 958 |

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՊԻՆՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է սեպտեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

| Կատարված աշխատանքները | Ջրաչափի տրամագիծ, մմ | | | | | | | | | Ընդամենը |
|-----------------------|----------------------|----|----|----|----|----|----|----|-----|----------|
| | 15 | 20 | 25 | 32 | 40 | 50 | 65 | 80 | 100 | |
| Տեղադրված | 202 | 8 | 1 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 212 |
| Փոխարինված | 216 | 28 | 14 | 8 | 2 | 5 | 0 | 0 | 0 | 273 |
| Տեղափոխված | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Տեխ. ակտ | 308 | 11 | 3 | 1 | 2 | 2 | 0 | 1 | 0 | 328 |
| Ընդամենը | 726 | 47 | 18 | 9 | 4 | 8 | 0 | 1 | 0 | 813 |

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 813 ջրաչափ: Կատարված աշխատանքների 89 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սեպտեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

| h/h | Տեղամասի անվանումը | Կոյուղագծերի ըվացում մ | Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ | Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ |
|-----|--------------------|---------------------------|---|--|
| 1 | Արաբկիր | 0 | 210 | 0 |
| 2 | Քանաքեռ-Զեյթուն | 0 | 264 | 0 |
| 3 | Մաշտոց | 0 | 247 | 1 |
| 4 | Շահումյան | 0 | 186 | 30 |
| 5 | Շիրակ | 1375 | 553 | 72.5 |
| 6 | Արթիկ | 0 | 122 | 0 |
| 7 | Ապարան | 0 | 36 | 0 |
| 8 | Ալավերդի | 0 | 26 | 2 |
| 9 | Աշոցք | 0 | 10 | 15.5 |
| 10 | Բերդ | 85 | 11 | 400 |
| 11 | Իջևան | 0 | 45 | 52 |
| 12 | Լոռի | 0 | 252 | 3 |
| 13 | Նոյեմբերյան | 50 | 18 | 0 |
| 14 | Սպիտակ | 0 | 17 | 0 |
| 15 | Ստեփանավան | 2100 | 32 | 0 |
| 16 | Թալին | 0 | 10 | 0 |
| 17 | Տաշիր | 0 | 9 | 0 |
| 18 | Չարենցավան | 0 | 122 | 0 |
| 19 | Աբովյան | 0 | 106 | 0 |
| 20 | Հրազդան | 0 | 139 | 84 |
| 21 | Կենտրոն | 450 | 269 | 12 |
| 22 | Հյուսիս | 90 | 281 | 70 |
| 23 | Հարավ | 0 | 362 | 9 |
| 24 | Էրեբունի | 0 | 165 | 6 |
| 25 | Արմավիր | 0 | 122 | 2 |
| 26 | Արտաշատ | 0 | 97 | 30 |
| 27 | Էջմիածին | 0 | 115 | 0 |
| 28 | Աշտարակ | 100 | 44 | 18 |
| 29 | Արարատ | 0 | 78 | 0 |
| 30 | Մասիս | 400 | 56 | 0 |
| 31 | Գավառ | 0 | 16 | 130 |
| 32 | Սևան | 0 | 77 | 15 |
| 33 | Մարտունի | 0 | 21 | 0 |
| 34 | Վարդենիս | 0 | 10 | 0 |
| 35 | Ճամբարակ | 51 | 15 | 0 |
| 36 | Դիլիջան | 0 | 46 | 24 |
| 37 | Վայք | 265 | 5 | 0 |
| 38 | Եղեգնաձոր | 60 | 10 | 52 |
| 39 | Ջերմուկ | 0 | 29 | 0 |
| 40 | Սիսիան | 0 | 47 | 6 |
| 41 | Գորիս | 0 | 29 | 5 |
| 42 | Կապան | 130 | 7 | 52 |
| 43 | Մեղրի | 0 | 22 | 0 |
| | Ընդամենը | 5156 | 4338 | 1091 |

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղներից մեկը դադարել էր աշխատել: Ձևման արդյունքում պարզ դարձավ, որ օդամուղի առանցքակալները շարքից դուրս են եկել: Օդամուղի առանցքակալները փոխարինվեցին և այժմ այն աշխատում է անխափան: Ձևվեցին նաև սարքավորումների բոլոր ռեդուկտորները և դրանց շարժիչները:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանի մանր մասնիկների ճաղավանդակի քերիչ սանրը խախտվել էր, որի պատճառով մանր ճաղավանդակը խցանվել էր: Քերիչ սանրը կարգաբերվեց և այժմ սարքավորումները աշխատում են բնականոն ընթացքով:

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանի պոմպերի արտադրողականությունն ընկել էր, որի պատճառ էր հանդիսացել հակադարձ փականների խցանումը: Արդյունքում հակադարձ փականները ապամոնտաժվեցին և մաքրվեցին: Այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր


| h/h | Գտնվելու վայրը | Կառույցի անվանումը | Մղված կեղտաջրերի ծավալը մ ³ | Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³ | Կեղտաջրից առանձնացած կեղտ տ |
|-----|----------------|--------------------|--|--|-----------------------------|
| 1 | ք. Գավառ | «Գավառ» ԿՄԿ | 0 | 55,948 | 10.8 |
| 2 | ք. Մարտունի | «Մարտունի» ԿՄԿ | 0 | 72,197 | 21.6 |
| 3 | ք. Վարդենիս | «Վարդենիս» ԿՄԿ | 0 | 178,910 | 5.4 |
| 4 | ք. Ջերմուկ | «Ջերմուկ» ԿՄԿ | 0 | 63,021 | 10.8 |
| 5 | ք. Դիլիջան | «Դիլիջան» ԿՄԿ | 0 | 101,263 | 9.9 |
| 6 | ք. Սևան | «Սևանի» N3 պ/կ | 14,997 | 0 | 0 |
| 7 | ք. Սևան | «Սևանի» N5 պ/կ | 9,014 | 0 | 0 |
| 8 | ք. Գավառ | «Գավառ» պ/կ | 9,850 | 0 | 0 |
| 9 | ք. Վարդենիս | «Վարդենիս» պ/կ | 10,800 | 0 | 0 |
| 10 | ք. Ջերմուկ | «Ջերմուկ» պ/կ | 3,474 | 0 | 0 |

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 275 բակային պոմպակայաններում կատարվել են ուսուժասիրություններ, որոնց արդյունքում թվով 161 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար: «Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար սեպտեմբեր ամսվա ընթացքում նորոգվել են թվով 4 մեքենայի արգելակման համակարգերը, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:



Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 5 մեքենա-մեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վրաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի գսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամսանիֆներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ: Փոխարինվել են թվով 54 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, գտիչներ, արգելակման հեղուկ և քսայուղեր:

Թվով 34 անվադող նորոգվել, փոխարինվել և հավասարակշռվել է:

Թվով 2 մեքենա-մեխանիզմի մարտկոցներ փոխարինվել են նորերով:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 3 մեքենայի վրա, փոխարինվել են հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Թվով 3 մեքենայի վրա փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 6 մեքենայի վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Թվով 8 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 5 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեններ, վառոցքի բանալիներ:



Թվով 2 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Թվով 2 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վրանները, փաթույթները և բենդեքսները:

Նորոգվել են թվով 2 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել է ատամսանիֆները, առանցքակալները, խտաբուկներ և ներդիրները:

Հիդրավլիկ համակարգի նորոգում է իրականացվել թվով 3 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են խցուկներ, բարձր ճնշման մղիչներ, ռետինե խողովակներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 2 մեքենա-մեխանիզմի վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.10.2022թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 586,934 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | 2022թ. սեպտեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ | Կնքված պայմանագրերի քանակը | % |
|---------------|------------------|--|----------------------------|------|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 675,531 | 560,345 | 82,9 |
| | Իրավաբանական անձ | 30,922 | 26,589 | 86,0 |

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | Բաժանորդների ընդհանուր քանակ | Ծախսող բաժանորդների քանակ | % |
|---------------|------------------|------------------------------|---------------------------|------|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 736,534 | 601,282 | 81,6 |
| | Իրավաբանական անձ | 36,297 | 26,332 | 72,5 |

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 681 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում են ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Սեպտեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 5283 ջրաչափ:

| Տնօրինություն | Սպառողներ | Մարքին | Անսարք | Միջամտած | Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 09.2022 |
|---------------|------------------|--------|--------|----------|---|
| Առևտրային | Բնակիչ-բաժանորդ | 2724 | 1792 | 238 | 4754 |
| | Իրավաբանական անձ | 316 | 190 | 23 | 529 |
| | Ընդամենը | 3040 | 1982 | 261 | 5283 |

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ սեպտեմբեր ամսին փոխարինված 5283 ջրաչափերի մոտ 43 %-ը (կամ 2243 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 152,904 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2022թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Սեպտեմբեր ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,614 մլն. դրամ (95 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում նախկինում կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում,

ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում՝ այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը հաշվետու ամսին գերծ է փասցել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները):

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Սեպտեմբեր ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 268 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 30.7 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

| Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական | | Բավարարված | | Մերժված | | 2017-2022թթ. ընթացիկ գործեր | | ԴԱՀԿ ներկայացված գործեր | |
|---|------------|------------|-----------|---------|----------|-----------------------------|-----------|-------------------------|-----------|
| քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար |
| 12787 | 1515648365 | 8241 | 827430864 | 158 | 20991281 | 4441 | 678220701 | 5568 | 576914104 |

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 64 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 1 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

| Տնօրինություն | Պարտքը 01.10.2022թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ) | Այդ թվում սեպտեմբեր ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ) |
|----------------------|--|--|
| Առևտրային, այդ թվում | 10,232 | 2,696 |
| Բնակիչ-բաժանորդներ | 7,337 | 1,769 |
| Իրավաբանական անձեր | 2,895 | 927 |

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 354.8 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ագատաշեն» համայնքը:

2022 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱՀԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.10.2022թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

| Տնօրինություն | Սպառողներ | Բնակիչ-բաժանորդներ | | | Բրավարանական | | |
|---------------|---------------|--------------------|------------------|-------|--------------|------------------|-------|
| | | Ընդամենը | Այդ թվում ծախսող | % | Ընդամենը | Այդ թվում ծախսող | % |
| Առևտրային | Ջրաչափով | 704,991 | 599,823 | 84.08 | 35,202 | 26,317 | 74.76 |
| | Առանց ջրաչափի | 31,543 | 1,459 | 4.63 | 1,095 | 15 | 1.37 |

Տվյալների բազայում 01.10.2022թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

| Տնօրինություն | Բնակիչ-բաժանորդներ | | | Բրավարանական | | |
|---------------|-------------------------|---------------------|-------|-------------------------|---------------------|-------|
| | Գործող ջրաչափերի քանակը | Այդ թվում ժամկետանց | % | Գործող ջրաչափերի քանակը | Այդ թվում ժամկետանց | % |
| Առևտրային | 876,599 | 396,683 | 45.25 | 38,980 | 11,233 | 28.82 |

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6439 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1077 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

| Հասցե | Ջրաչափերի ընդհանուր քանակ | Տեղադրված ջրաչափերի քանակ | % |
|----------------------------|---------------------------|---------------------------|------|
| գ.Քասախ | 2409 | 1979 | 81.9 |
| գ.Պոռշյան | 1640 | 1115 | 66.5 |
| ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ. | 5947 | 1895 | 32.4 |

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 12608, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 12453, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 2448, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2801, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2047, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2796 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4964 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՅՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացուցների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրվում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացուցների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

| Տնօրինություն | Քանակ | Խ.մ. | Գումար (ՀՀ դրամ) |
|---------------|-------|---------|------------------|
| Առևտրային | 310 | 196,218 | 35,860,999 |

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի սեպտեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 97.1%, ինչը 0.5% ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 108 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաբանակը 2022թ-ի սեպտեմբեր ամսին, 2021 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 207 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 915 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 5915 կՎտ.ժ (1.17 %) այն դեպքում, երբ նորակառույց շենքերի 16 պոմպակայան ավելացել է «Վեռլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Միայն այդ 16 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը կազմում է 13318 կՎտ.ժ: Իսկ առանց այս ավելացված պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը կնվազեր 19233 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ


Հաշվետու ժամանակահատվածում 150 հասցեներում կատարվել են էլ. հաշվիչի ընթերցման, ցուցմունքների գույքագրման աշխատանքներ: Կատարվել է փոխադարձ ակտերից էլ. էներգիայի ծախսերի դուրսբերում, մշակում և վերլուծություն, «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ փաստաթղթաշրջանառության կազմակերպում: Երեք հասցեներում տեղադրվել է նոր էլ. հաշվիչ:

- ▶ Դազարավան ք/կ
- ▶ Ճամբարակի խ/հ
- ▶ Լեռնագոգի պ/կ:

Հոսանքի ծախսի վերլուծության արդյունքում 5 հասցեներում հայտնաբերված խնդիրները վերացվել են:

● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 761 կՎտ.ժամ 2.5%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ



Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 38 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 22 պոմպակայաններում վերացվել են հայտնաբերված թերությունները:


Թվով 275 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 161 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները: Ինչպես նաև իրականացվել են վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՋ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ: Թվով 3 հասցեներում հայտնաբերվել են ջրագծի վթարներ:

Ինվերտորների տեղադրում

Հաշվետու ամսում երկու հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով.

- ▶ Դիմիտրով 78, 80 (Er-23)
- ▶ Ջորադյուր ՕԿՁ (Hy-32):

Տեղադրված ընդհանուր 150 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 6,868 կՎտ.ժ կամ 3%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 20 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:


● 2022թ. սեպտեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 1 015 921 ԿՎտ/ժամ (49,81%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 163 303 ԿՎտ.ժ/ամիս կամ 7,27%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 1 179 165 ԿՎտ.ժ կամ 21,24 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՆՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են սեպտեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.


| Աշխատանքի անվանում | Չ/Մ | Քանակ |
|---|--------------------|-------|
| Գյուղերի և քաղաքների ամբողջական տվյալների բազաների ստեղծում, թարմացում և կապվող ջրատար համակարգերի թարմացում, միավորում | Գյուղեր և քաղաքներ | 14 |
| Երևան քաղաքի փողոցների բաշխիչ ցանցի վերակառուցված ջրագծերի և կոյուղագծերի մուտքագրում ԱՏ համակարգ | փողոցներ | 4 |
| Էրեբունի օդանավակայանի հարակից թաղամասի վերակառուցված ջրագծերի մուտքագրում ԱՏ համակարգ | թաղամաս | 1 |
| Եղեգնաձոր քաղաքի բաշխիչ ցանցի վերակառուցված ջրագծերի մուտքագրում ԱՏ համակարգ | քաղաք | 1 |
| Արմավիրի մարզի բնակավայրերի բաշխիչ ցանցի վերակառուցված ջրագծերի մուտքագրում ԱՏ համակարգ | մարզ | 1 |
| Վարդենիս համայնքի ջրամատակարարման համակարգի ջրագծերի բազայի թարմացում | քաղաք | 1 |
| Արագածոտն և Շիրակի մարզերի, փողոցների և շենք/շինությունների թվային շերտերի թարմացում և բազավորում | մարզ | 2 |
| Լուկաշին թաղամասի Գրիգոր Ջոհրաբ փողոցի վերակառուցված տնային միացումների և դիտահորերի թվայնացում | փողոց | 1 |
| Թարմացված ջրագծերի տվյալների տեղեկատվության համալրում մարզերում | մարզ | 9 |
| Կատարվում է Վեոլիա Ջուր ընկերության ենթակայության տակ գտնվող պետական գույքի տեղադիրքների թվայնացում և բազավորում | հատ | 60 |
| Տոպուզիայի արդյունքում մատնանշված ջրագծերի սխալների ուղղում | հատ | 200 |
| Ջերմուկ քաղաքի կոյուղագծերի և դիտահորերի վերաբերյալ տվյալների բազայի համալրում | քաղաք | 1 |
| Շիրակի մարզի Ախուրյան գյուղի կոյուղագծերի թվայնացում | մարզ | 1 |
| «Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական կետերի ուղղում | կետ | 701 |
| «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական կետերի ուղղում | կետ | 57 |
| Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը | կմ | 2445 |
| Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը | կմ | 8674 |
| «Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում | կետ | 64 |
| «Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում | կետ | 233 |
| Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը | կմ | 1779 |
| Մարզային կոյուղու երկարությունը | կմ | 1782 |

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք սեպտեմբեր ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը

Գառնի-Արտաշատ ջրատար

Ջրատարներից մեկի վրա (D=500մմ)՝ Գառնու ձորում, քարաթափման հետևանքով առաջացել էր վթար ≈ 50 լ/վ մեծությամբ: Կազմակերպվել է տվյալ ջրատարի կանգառը ու եռակցման փոփոխությունները վերականգնվել է ջրատարի ժառանգում հատվածը:



Ապարան-Երևան ջրատար



Ջրատարի վրա գտնվող հոսքաչափի տվյալների նվազման պատճառով կատարվել է որոնողական աշխատանք և Երևան-Աշտարակ ճանապարհի եզրին գտնվող խնձորի այգիներում հայտնաբերվել է վթար ≈ 20 լ/վ ծավալով: Այդ մասին անմիջապես տեղեկացվել է «Մաշտոց» ՇՏ-ին: Արտահոսքը կանխվել է, և ջրատարի ժառանգում հատվածը վերականգնվել է:

Ջերմանիս-Վեդի ջրատար

Կապտաժների և ջրատարի շրջայցի ժամանակ պարզվել է, որ մեկ կապտաժի ջուրը մուտք չի գործում ջրատարը: Այդ խնդիրը տեղում կարգավորվել է, ինչի արդյունքում ջրատարում եղած ջուրն ավելացել է 4լ/վ-ով: Ջրատարի շրջայցի ժամանակ հայտնաբերվել են ապօրինություններ, որոնք տեղում վերացվել են: Դրա շնորհիվ ջրատարում ջուրն ավելացել է 2լ/վ-ով:



Երևան քաղաքում հաշվետու ամսվա ընթացքում կատարվել են նաև ջրաքանակների բաշխման աշխատանքներ:


Գոտիավորման աշխատանքներ

Քաղաք Գյումրի

● Գյումրի քաղաքի Թամանյան-Շչեդրին փողոցների խաչմերուկում Շիրակ տեղամասի հետ համատեղ ուսումնասիրվել է D=250մմ թուջե ջրագիծը, որի մի հատվածը դեռևս սպասարկման տակ է: Շահագործումից հանելու ենթակա հատվածը տեղորոշելուց հետո, Շիրակ տեղամասի կողմից այն խցափակվել է: Արդյունքում խցափակման եղանակով շահագործումից հանվել է D=250մմ, L=220մ թուջե ջրագիծ, տնտեսվել է Q = 3-4լ/վ ջրաքանակ:



● Գյումրի քաղաքի Անի թաղամաս S. Ճարտարապետ 5/3 շենքի դիմաց հայտնաբերված վթարված ջրագծի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ քայքայված լինելու պատճառով հնարավոր չէ վթարավերականգնողական աշխատանքներ կատարել: Ուստի ներանցման միջոցով շահագործումից հանվել է D=100մմ, L=20մ պողպատե ջրագիծ D=63մմ ՊԷ L=20մ ջրագծի միջոցով: Արդյունքում տնտեսվել է Q=0,5-1լ/վ ջրաքանակ:



Մևան քաղաք

● Էներգետիկների 3 հասցեում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Էներգետիկների փողոցով անցնող D=150 մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q = 2 լ/վ ջրաքանակ:



● Հացառատ-Լճաշեն ջրատարի (D=600մմ) վրա իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Գավառ քաղաքում Օդանավակայանի մոտ հայտնաբերվել է վթար բաժանորդի ներքին ցանցում: Վթարը վերացվել է բաժանորդի կողմից և արդյունքում տնտեսվել է Q = 5 լ/վ ջրաքանակ:

● Գավառ քաղաքի Կարմիր գյուղում իրականացված աշխատանքների արդյունքում Նվեր Սաֆարյան փողոցում հայտնաբերվել է վթար D=160մմ պե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q = 4լ/վ քանակությամբ վթար:





● Մյասնիկյան գյուղում Արմավիր տեղամասի աշխատակիցների հետ համատեղ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է 3 գաղտնի վթար Շահումյան փողոց 34, 50, ինչպես նաև Գագարին փողոց 3 տան դիմաց: Բոլոր վթարները հայտնաբերվել են նշված փողոցներով անցնող $D=100$ մ պողպատե ջրագծերի վրա: Վթարները վերացնելուց հետո տնտեսվել է ընդհանուր $Q=5$ լ/վ ջրաքանակ:

Քաղաք Աբովյան

● «Աբովյան» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 22բ շենքի մոտով անցնող $D=150$ մ պողպատե ջրագծի վրա: Ներանցման միջոցով վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=12$ լ/վ ջրաքանակ:




Քաղաք Երևան



● «Էրեբունի» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մուրացան փողոցով անցնող ջրագծին միացված 2 հատ $D=25$ մ ջրագծերի վրա: Նշված միացումները խցափակելուց հետո տնտեսվել է $Q=1.5$ լ/վ ջրաքանակ:

● «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Խանջյան փողոցին հարակից այգու տարածքով անցնող $D=150$ մ թուջե ջրագծի վրա: Նշված միացումները խցափակելուց հետո տնտեսվել է $Q=3$ լ/վ ջրաքանակ:



● «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար Մերձավան գյուղի $D=300$ մ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q=20$ լ/վ ջրաքանակ:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ Շիրակի մարզում գտնվող Ծաղկասար քլորակայանի սանիտարական գոտու տարածքում՝ Չլկանների ջրատարի վրա, տեղադրվել է էլ. մագնիսական հոսքաչափ:
- ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի «Ֆրոլովո» ՋՄԿ-ի սան. գոտու տարածքում կառուցվել է մոտ 160 գծ/մ ցանկապատ:



Այժմ, սան. գոտու տարածքն ամբողջությամբ ցանկապատված է:

- Քաղաք Մասիսի Արարատյան քլորակայանում նորոգվել է հեղուկ քլորի համակարգը սնուցող քլորակայան մտնող ջրագծի խողովակը, որը ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:



- Քաղաք Աշտարակի Արտակ քլորակայանում հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել է հիպոքլորիդի հաբի Easyflow սարքավորման փասաված թողարկը:



- Քաղաք Գավառի Գանձակ քլորակայանում տեղադրվել է հիպոքլորիդի հաբի համակարգի նոր վերանորոգված դոզավորման պոմպը՝ հիպոքլորիդի հաբի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



- Քաղաք Երևանի Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում վերանորոգվել է 17/7 լ/ժ արտադրողականությամբ նոր դոզավորման պոմպ՝ պահեստային նպատակով:



- Քաղաք Սպիտակի Ջրաշեն քլորակայանում մոնտաժվել է հեղուկ քլորի տրման մաշված խողովակը նորով՝ հեղուկ քլորի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:



- Քաղաք Երևանի Ավան Բաբաջանյան 3/1 հասցեում վերանորոգվել և փորձարկվել է պահեստային 4կգ/ժ արտադրողականությամբ վակուում կարգավորիչ:


● Քաղաք Սպիտակի Չախկալ ք/կ-ում շինարարի կողմից կառուցված քլորակայանում տրանսդրվել է մեր կողմից վերանորոգված 4 կգ/ժ արտադրողականությամբ վակուում կարգավորիչ:



3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 36304 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 11722 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 9281 զանգ (79,2%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2441 զանգ (20,8%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 24582 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 17175 զանգ (69,9%), իսկ մարզերինը՝ 7407 զանգ (30,1%):
- 2021թ. սեպտեմբերի համեմատ՝ 2022թ. սեպտեմբեր ամսին 5.95%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակն ավելացել է 0,42 %-ով:
- 2021թ. սեպտեմբերի համեմատ՝ 2022թ. սեպտեմբեր ամսին 56%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը և 4 %-ով՝ 5 բոկսից ավել զանգերի քանակը, նաև 161 %-ով ավելացել է հայտարարությունների լսումն ավտոմատ ծառայության միջոցով: Դա վկայում է այն մասին, որ բաժանորդները ջրազրկման մասին տեղեկատվությանը փորձում են ծանոթանալ լսելով ջրազրկումներ բաժնում տեղադրված ձայնագրությունը և ստանալով համապատասխան տեղեկատվությունը, այլ ոչ թե միանալով օպերատորին:
- 2021թ. սեպտեմբերի համեմատ՝ 2022թ. սեպտեմբեր ամսին 11,48%-ով նվազել է ջրամատակարարման բողոքները:

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր



| | Ստորաբաժանում | 2021 սեպտեմբեր | 2022 սեպտեմբեր | |
|----------------------------|----------------------------|----------------|----------------|---------------|
| Առևտրային | Ընդամենը | 11064 | 11722 | 5.95% |
| | Երևան | 8653 | 9281 | 7.27% |
| | Մարզեր | 2411 | 2441 | 1.20% |
| Շահագործում | Շահագործում | 24479 | 24582 | 0.42% |
| | Երևան | 16965 | 17175 | 1.24% |
| | Արարկիի | 3731 | 2521 | -32.43% |
| | Քանաքեռ-Զեյթուն | 1861 | 1743 | -6.34% |
| | Մաշտոց | 1784 | 2502 | 40.25% |
| | Շահումյան | 2992 | 1900 | -36.50% |
| | Շենգավիթ | 1463 | 2451 | 67.53% |
| | Գենտրոն | 2064 | 3042 | 47.38% |
| | Հյուսիս/Ավան՝ Լոր Լորք/ | 964 | 1616 | 67.63% |
| | Էրեբունի | 2106 | 1400 | -33.52% |
| | այդ թվում կոյուղու վթար | 102 | 185 | 81.37% |
| | այդ թվում դիտահորի խցանում | 3157 | 4515 | 43.02% |
| | ՄԱՐԶԵՐ | 7514 | 7407 | -1.42% |
| | Հարավ | 3890 | 3402 | -12.54% |
| | Հյուսիս | 3624 | 4005 | 10.51% |
| | այդ թվում կոյուղու վթար | 64 | 58 | -9.38% |
| այդ թվում դիտահորի խցանում | 2071 | 2454 | 18.49% | |
| Ընդամենը | 35543 | 36304 | 2.14% | |

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Մեպտեմբերը սկսվեց Հանրային հեռուստաալիքի ռեպորտաժով՝ Վեոլիա Ջուր ընկերության ներդրումների վերաբերյալ: Նկարահանումները կատարվել են Մալաթիա-Մեքաստիա, Աջափնյակ վարչական շրջաններում և նպատակ ունենին ցույց տալ հանրությանը ջրամատակարարման բարելավմանն ուղղված մեր ջանքերը:

Ընդհանրապես ներդրումային թեման առանցքային էր հաշվետու ամսում: Facebook սոցիալական ցանցի veolia.armenia էջում հրապարակվել են հաղորդագրություններ նոր ջրագծերի կառուցման մասին Մասիսի տարածաշրջանում, Արտամետ գյուղում, Այգեկ գյուղում, Վերին Քաղսի գյուղում, Կանաչուտ գյուղում, Գյումրիում, Երևանում, Չարենցավանում, Կապանում, «Ագարակ» պուլպակայանում, Ջերմանիսում կապտաժների վերակառուցման ծրագրի շրջանակներում: Այսպիսով, խոսքը տասնյակ հազարավոր սպառողների սպասարկման բարելավման մասին է: Ավելին, հաջորդ ամիսներին նման հրապարակումները ավելանալու միտում ունեն, քանի որ աշնանը ավանդաբար ավարտին են մոտենում ՊԿԱՕ - ով և շահագործման տեղամասերի սեփական ուժերով իրականացվող ծրագրերը:



Ընդ որում, շարունակելով նախորդ ամիսների պրակտիկան, Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/ ընձեռնված հնարավորություններն օգտագործել է «Հանրային Կապեր» /ՔՐ/ տեղեկատվական ծրագրի շրջանակներում ԻՐԱԶԵԿՈՒՄ բաղադրիչին ավելացնել ԿՐԹՈՒԹՅՈՒՆ բաղադրիչը: Եվ խոսքը միայն ջրագծերի կառուցմանը չի վերաբերում: Այսպես, ներկայացնելով Գյումրիում նախորդ տարիներին ասֆալտի տակ փասցած դիտահորերի հայտնաբերումը, խոսվել է փականային հանգույցների կարևորության մասին բաշխիչ ցանցի կանոնավոր աշխատանքի համար: «Մասիս-Խարբերդ» ՕԿՁ-ի հերթական սանիտարական մաքրումն ու ախտահանումը առիթ է հանդիսացել սպառողներին ներկայացնելու ՕԿՁ-ների դերը ջրամատակարարման ապահովման գործում, դրանք քանակը համակարգում և սպասարկմանն առնչվող տարբեր հարցեր: Նույնը կարելի է ասել «Չլկաններ» կոչվող աղբյուրում «փախչող ջրերը» հավաքելուն ուղղված ծրագրի մասին: Հանրությանը տեղյակ է պահվել աղբյուրի ինժեներական կառույցների, ջրի արտադրության տեխնոլոգիայի և քանակի ավելացման կարևորության մասին՝ Շիրակի մարզի 3 և Արագածոտնի մարզի 12 գյուղեր ձմռանը ջրով ապահովելու նպատակով: Կոտայքի մարզի Թեղենիք գյուղը սնող ջրագծի վրա հոսակորուստի հայտնաբերումը նկարագրելիս էլ շեշտը դրվել է աշխատանքների ընթացքում «Լոկատոր» հեռատեղեկատվական ծրագրի ու Հոսակորուստների հայտնաբերման և գոտիավորման վարչության մասնագետների կողմից ակուստիկ սարքերի կիրառման վրա:



Մեպտեմբերին բնականաբար չեն մոռացվել վթարների արագ վերացմանն ուղղված ՎեոլիաԹիմի ջանքերը /Շենգավիթ, Մալաթիա-Մեքաստիայի, Նոր գյուղ և այլն/: Մասնավորապես ներկայացվել է ռազմական գործողությունների ընթացքում Ջերմուկի առողջարանային թաղամասը սնող վթարված մետաղական ջրագծի օպերատիվ վերանորոգումը «Ջերմուկ» շահագործման տեղամասի կողմից:

Պլանային աշխատանքներից, սեպտեմբերին լուսաբանվել է անձրևային սեզոնին ընդառաջ անձրևատար համակարգերի դիտահորերը ներառյալ, հերթական սանիտարական մաքրման ընթացքը: Իսկ որպես տարբեր կառույցների, առաջին հերթին տեղական ինքնակառավարման մարմինների հետ ակտիվ համագործակցության արտահայտություն, ներկայացվել է Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի աշխատակազմի ՖԲ էջի հրապարակումը՝ Մվաճյան 14 հասցեում համատեղ միջոցներով նոր կոյուղագծի կառուցման մասին:

Հարկ է առանձնահատուկ նշել, որ սեպտեմբերին Հանրային հեռուստաալիքը եթեր է հեռարձակվել ևս մեկ ռեպորտաժ՝ նախկինում ապօրինի ջրօգտագործողներին պարզեցված կարգով բաժանորդ դառնալու հնարավորության մասին, ինչը վկայում է այս կարևոր ու հեղինակավոր լրատվամիջոցի հետ Վեոլիա Ջուր ՓԲԸ ամուր կապերի և հեռանկարային համագործակցության հնարավորության մասին:

Ինչ վերաբերում է հրապարակումների մատուցման ձևերին և միջոցներին, ապա ՀԿԲ-ն նախորդ ամիսների նման

ապահովել է դրանց բազմազանությունը ու աշխատանքների ընդարձակ աշխարհագրությունը: Լուսանկարներ, լուսանկարաշարեր, տեսանյութեր, ինֆոգրաֆիկա. արվել է հնարավորինս ամեն առանձին թեմա հանրությանը ներկայացնելու լավագույն ձևը գտնելու համար: Հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, facebook.com/veolia.armenia-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կայքի նաև մյուս digital միջոցներում. Veolia.am պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և youtube Veolia Jur էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

● ՈԱԱ բաժինը (Որակավորման հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ, 247-րդ հոդվածի 3-րդ մասի և 254-րդ հոդվածի, «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ հաստատված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջներով և ելնելով Վեոլիա Գրուպի «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործաձում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջներից, Ընկերության քլորակայանների ինժեներատեխնիկական անձնակազմի թվով 19 քլորի օպերատորի համար կազմակերպեց և իրականացրեց 3 մոդուլից բաղկացած մասնագիտական որակավորման դասընթաց/գիտելիքների ստուգում.

● «Քլորակայաններ շահագործող, սպասարկող անձնակազմի մասնագիտական որակավորում» առկա դասընթաց/գիտելիքների ստուգում,

● Վեոլիա Գրուպի «Վտանգավոր նյութերի, քիմիկատների տեղափոխում, պահեստավորում գործաձում» Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտի պահանջները առկա դասընթաց:


● «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» առկա դասընթաց:



● «ԱԱ Միջազգային Շաբաթ-2022» միջոցառման ընթացքում, սեպտեմբերի 19-ից 23-ն ընկած ժամանակահատվածում, «Անվտանգությունը մեր ձեռքերում է» կարգախոսով խաղ-վարժանքի շրջանակներում ՈԱԱ բաժինը Ընկերության ՀՏԿ-ներում, ստորաբաժանույններում հայտնաբերեց «Վերին վերջույթների ժառանգան հետ կապված ռիսկեր», Ընկերության համապատասխան ստորաբաժանույնների հետ համագործակցելով շտկեց դրանք և վերջինիս վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն զետեղեց Գրուպի կողմից մշակված հատուկ թվային հարթակում:


● «ԱԱ Միջազգային Շաբաթ-2022» միջոցառման շրջանակում, սեպտեմբերի 19-ից 23-ն ընկած ժամանակահատվածում, Ընկերության Շահագործման տեղամասերի աշխատողների աշխատանքային պարտականությունների անվտանգ կազմակերպման և իրականացման մակարդակը բարձրացնելու անհրաժեշտությունից ելնելով, Բաժինը կազմակերպեց և իրականացրեց «Մասնագիտական ռիսկերի արդյունավետ կառավարման գործիքակազմ» թեմայով և Վեոլիա Գրուպի «Փոստրակների և խրամուղիների մշակման աշխատանքներ», «Աշխատանքներ փակ տարածքներում», «Աշխատանքներ բարձրության վրա», «Երթևեկությունը աշխատավայրում» Բարձր Ռիսկերի Կառավարման ստանդարտի պահանջները թեմաներով դասընթացները Ընկերության «Երևան» շահագործման

տնօրինության «Հյուսիս» շահագործման տեղամասի թվով 19 աշխատողի և «Հյուսիս» շահագործման տնօրինության «Շիրակ» շահագործման տեղամասի թվով 29 աշխատողի համար:





2021-2022թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ




5.2. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 2 քլորակայանում, 40 վարչական շենքում, 1 ԿՄԿ-ում: Ստուգայքերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 3 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

2022 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.3. ՔԼՈՐԻ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՆՇԱՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՎԿԱՅԱԳՐՄԱՆ ԵՎ ՆԵՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Հաշվետու ամսում Բաժինը, ելնելով համակարգերում շահագործվող ճնշման տակ աշխատող անոթների՝ քլորի բալոնների, կոնտեյներների անվտանգ շահագործման անհրաժեշտությունից, Տեխնիկական տնօրինության Ք և ԽՋՄԿ Ծառայության հետ համատեղ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված լաբորատորիայում, կազմակերպեց ճնշման տակ աշխատող թվով 10 կոնտեյների ճնշափորձարկման, վկայագրման և ներկման աշխատանքները:

5.4. ԲԺՇԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

● ՈԱԱ բաժինը, առաջնորդվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 27 մարտի 2003 թվականի N 347-Ն և 15-ը հուլիսի 2004 թվականի N1089-Ն որոշումներով հաստատված կարգերի պահանջներով, սույն թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում՝ վերոգրյալ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան բժշկական զննություններ և հետազոտություններ իրականացնելու լիցենզիա ունեցող բժշկական կենտրոնում կազմակերպեց շուրջ 370 աշխատողի առողջական վիճակի դինամիկ հսկողության, մասնագիտական հիվանդությունների կանխարգելման և դրանց սկզբնական նշանների ժամանակին հայտնաբերման, դժբախտ պատահարների կանխման ու աշխատանքի անվտանգության պահպանման, վարակիչ և մակարուծային հիվանդությունների տարածման կանխարգելման, հիվանդությունների հայտնաբերման, տարեկան պարտադիր բժշկական զննություններ և լաբորատոր հետազոտություններ:

5.5. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Բաժինը, ելնելով համակարգերում տեխնածին վթարների կանխարգելման և բացառման, ինչպես նաև մարդու կյանքի և առողջության և շրջակա միջավայրի վրա հնարավոր վթարների բացասական ազդեցության նվազեցման ուղղված աշխատանքների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից, հաշվետու ամսվա ընթացքում իրականացրել է թվով 1 քլորակայանի տեխնիկական անվտանգության վկայագրի և թվով 1 քլորակայանում տեղադրված ամբարձիչ սարքավորման Տեխնիկական անվտանգության վկայագրի մշակման աշխատանքներ:

● Բաժինը հաշվետու ամսում մշակեց և «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ-ին տրամադրեց սույն թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում՝ երկրորդ փուլով նախատեսված թվով 129 ԱՎՕ-ների փորձաքննության աշխատանքների իրականացման պլան-ժամանակացույցը:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1. Համակարգչային ցանց

Սեպտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Տրամադրվել են նոր համակարգիչներ և հին համակարգիչները նույնպես վերաբաշխվել են:
- Կատարվել են մոնիտորինգային աշխատանքներ՝ անվտանգության տեսահսկման համակարգերի ուղղությամբ:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել՝ անսարք սարքավորումները փոխարինելու նոր սարքավորումներով, ինչպես նաև տեղադրվել են նորերը:
- Գրուպի կիբերանվտանգության դեպարտամենտի հետ համատեղ մշակվել է նոր կիբերանվտանգության ուղղված քաղաքականություն կապված Արդյունաբերական կիբերանվտանգությունը բարձրացնելու նպատակով:
- Ներդրվել են մի շարք կիբերանվտանգության համակարգեր
- Իրականացվել են Linux օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Իրականացվել են Windows օպերացիոն համակարգով աշխատող սերվերների ծրագրային թարմացումներ:
- Սպասարկվել է մոտավորապես 500-630 զանգ SS բաժնի աջակցության համարով:
- Գրանցվել, սպասարկվել և փակվել է մոտ 700 SS աջակցության տոմս:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Սեպտեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Մի շարք հաշվետվություններ են պատրաստվել և տրամադրվել ՀՕԿՀ և Զրային Կոմիտե, ինչպես նաև տարբեր ներքին և արտաքին աուդիտորներին:
- Ինտերակտիվ համակարգում կատարվել են փոփոխություններ, կապված Առևտրային սնօրինության և այլ ստորաբաժանումների գործընթացը ավելի ավտոմատիզացնելու հետ
- Ընկերությունում ներդրվել է Հայփոստ ընկերության Hybrid և Envelop համակարգերը: Կատարվել են մի շարք փոփոխություններ Ինտերակտիվ համակարգում, որ հնարավոր լինի ինտեգրել Hybrid համակարգը:
- Ակտեր Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

| Խախտման արձանագրություններ | | | |
|----------------------------|------------|---------------|--------------|
| Տեղամաս | Ընդամենը | | |
| | քանակ | հազ. ի/մ | մլն. դրամ |
| Յյուսիս | 3 | 1.14 | 0.22 |
| Էրեբունի | 6 | 5.50 | 0.99 |
| Շենգավիթ | 10 | 3.48 | 0.66 |
| Կենտրոն | 2 | 1.03 | 0.21 |
| Արաբկիր | 6 | 4.90 | 0.98 |
| Մաշտոց | 7 | 3.35 | 0.60 |
| Շահումյան | 5 | 27.67 | 4.72 |
| Եղվարդ | 7 | 4.31 | 0.78 |
| Քանաքեռ-Զեյթուն | 6 | 1.93 | 0.35 |
| ԱԿԸ | 63 | 42.92 | 8.29 |
| Լոռի | 8 | 3.51 | 0.65 |
| Շիրակ | 11 | 7.25 | 1.40 |
| Արթիկ | 1 | 1.55 | 0.31 |
| Արարատ | 22 | 2.64 | 0.48 |
| Աբովյան | 26 | 28.58 | 5.03 |
| Յրազդան | 9 | 2.66 | 0.52 |
| Այվերդի | 4 | 1.42 | 0.25 |
| Աշոցք | 4 | 1.55 | 0.26 |
| Արտաշատ | 8 | 2.10 | 0.36 |
| Բերդ | 2 | 0.95 | 0.17 |
| Գավառ | 2 | 0.87 | 0.15 |
| Գորիս | 10 | 3.09 | 0.59 |
| Դիլիջան | 1 | 0.41 | 0.08 |
| Էջմիածին | 9 | 8.11 | 1.55 |
| Թալին | 1 | 0.17 | 0.03 |
| Իջևան | 4 | 0.29 | 0.06 |
| Կապան | 2 | 0.77 | 0.14 |
| Մասիս | 4 | 1.07 | 0.20 |
| Նոյեմբերյան | 1 | 0.52 | 0.02 |
| Արմավիր | 3 | 0.90 | 0.18 |
| Աշտարակ | 2 | 0.64 | 0.11 |
| Զարենցավան | 9 | 5.81 | 1.02 |
| Սիսիան | 3 | 1.55 | 0.31 |
| Սպիտակ | 3 | 0.52 | 0.09 |
| Ստեփանավան | 1 | 0.52 | 0.09 |
| Ընդամենը | 265 | 173.67 | 31.86 |

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում են ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում են հունիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

| Տեղամաս | Լաբորատորիա | | | |
|-----------------|---------------|---------------|---------------|--------------|
| | Միջամտություն | | Անսարքություն | |
| | քանակ | հազ ի/մ | քանակ | հազ ի/մ |
| Յյուսիս | 18 | 4.74 | 18 | 0.26 |
| Էրեբունի | 9 | 6.61 | 27 | 1.77 |
| Ծենգավիթ | 13 | 4.53 | 43 | 3.58 |
| Կենտրոն | 3 | 2.32 | 19 | 0.23 |
| Արաբկիր | 9 | 2.94 | 25 | 0.84 |
| Մաշտոց | 25 | 17.74 | 105 | 2.14 |
| Շահումյան | 9 | 3.47 | 71 | 0.42 |
| Քանաքեռ-Զեյթուն | 1 | 0.26 | 9 | 0.12 |
| Լոռի | 17 | 8.27 | 68 | 0.35 |
| Շիրակ | 20 | 4.77 | 22 | 0.09 |
| Արթիկ | 4 | 1.42 | 33 | 0.23 |
| Արարատ | 2 | 0.21 | 4 | 0.08 |
| Աբովյան | 5 | 4.10 | 36 | 0.22 |
| Յրազրան | 28 | 9.17 | 29 | 1.28 |
| Ալավերդի | 2 | 0.52 | 23 | 0.23 |
| Արտաշատ | 3 | 0.47 | 16 | 0.18 |
| Գավառ | 5 | 1.80 | 45 | 0.46 |
| Գորիս | 9 | 7.27 | 27 | 2.01 |
| Դիլիջան | 11 | 4.26 | 15 | 0.09 |
| Եղեգնաձոր | 3 | 2.58 | 2 | 0.01 |
| Էջմիածին | 6 | 3.77 | 16 | 0.21 |
| Թալին | 1 | 0.30 | 7 | 0.31 |
| Իջևան | 8 | 0.92 | 25 | 1.73 |
| Կապան | 6 | 2.84 | 21 | 0.23 |
| Ճամբարակ | | - | 1 | 0.32 |
| Մասիս | 52 | 29.99 | 69 | 0.74 |
| Մարտունի | | - | 2 | 0.02 |
| Արմավիր | 4 | 1.55 | 13 | 0.14 |
| Զերմուկ | 1 | 0.26 | 3 | 0.00 |
| Սևան | 2 | 0.63 | 2 | 0.00 |
| Վայք | | - | 8 | 5.86 |
| Աշտարակ | 1 | 0.61 | 23 | 0.13 |
| Զարենցավան | 2 | 0.44 | 28 | 0.30 |
| Սիսիան | 2 | 4.18 | 29 | 0.45 |
| Սպիտակ | 2 | 0.17 | 11 | 0.04 |
| Ստեփանավան | 2 | 1.03 | 12 | 0.04 |
| Տաշիր | | - | 9 | 0.03 |
| Ընդամենը | 285 | 134.14 | 916 | 25.15 |



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am